

## Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

### **Բարեգործական ծրագրերի շրջանակներում 2011 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների մասին**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից որակված ծրագրերի շրջանակներում 2011 թվականի ընթացքում հանրապետությունում բարեգործական և մարդասիրական օգնության ծրագրեր են իրականացրել միջազգային և հանրապետական 144 կազմակերպություն: Դրանցից 58 կազմակերպություն իրականացրել են երկարաժամկետ ծրագրեր՝ կապված ինչպես աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման, այնպես էլ՝ բարեգործական բեռների ներմուծման ու բաշխման հետ, իսկ 86 կազմակերպություն իրականացրել են կարճաժամկետ ծրագրեր՝ կապված միայն բարեգործական բեռների ներմուծման և բաշխման հետ:

Մեծածավալ ծրագրեր են իրականացնում «Տաշիր» բարեգործական հիմնադրամը՝ 5.29 մլրդ դրամ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ 4.01 մլրդ դրամ, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը՝ 2.51 մլրդ դրամ, Հայկական բարեգործական ընդանհուր միության Հայաստանի ներկայացուցչությունը՝ 2.13 մլրդ դրամ, «Հայաստան» համահայկական հիմնադրամը՝ 1.98 մլրդ դրամ, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանաց միությունը՝ 1.45 մլրդ դրամ և այլ ճանաչված կազմակերպությունները («Մատենադարան» հիմնադրամը, «Այբ» կրթական հիմնադրամը, «Սիմոնյան» կրթական հիմնադրամը, «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամը, Ամերիկայի «Հայ օգնության ֆոնդ» բարեգործական կազմակերպությունը և այլն):

Սույն տեղեկանքում ընդգրկված են ամփոփ տեղեկություններ միայն այն ծրագրերի վերաբերյալ, որոնք համապատասխան որակում են ստացել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից:

### **Բարեգործական բեռների ներմուծում և բաշխում**

2011 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից որակված բարեգործական ծրագրերի շրջանակներում 43 երկրից հանրապետություն են ներմուծվել շուրջ 22.48 մլրդ դրամ մաքսային արժեքով բեռներ՝ 134 կազմակերպության հասցեով, այդ թվում՝ երկարա-

ժամկետ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հասցեով՝ 8.2 մլրդ դրամ արժեքով (այդ թվում շուրջ 2.17 մլրդ դրամ երկարաժամկետ շինարարական ծրագրերի շրջանակներում ստացված շինարարական ապրանքներ և նյութեր), կարճաժամկետ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հասցեով՝ 14.28 մլրդ դրամ արժեքով (այդ թվում ՀՀ առողջապահության նախարարության (2.23 մլրդ դրամ) և ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (7.49 մլրդ դրամ) հասցեով ստացվել են 9.72 մլրդ դրամ մաքսային արժեքով դեղորայք, բժշկական պարագաներ և սարքավորումներ): 2010 թվականի համեմատությամբ 2011 թվականին ներմուծված բեռների մաքսային արժեքը աճել է շուրջ 3.36 մլրդ դրամի չափով, որը առավելապես պայմանավորված է դեղորայքի ներմուծման աճով:

Հարկ է նշել, որ ներմուծվող դեղորայքը, բժշկական սարքավորումները և պարագաները «Մարդասիրական օգնության, բարեգործության և տեխնիկական օգնության կարգով ստացվող դեղերը, բժշկական նշանակության առարկաներն ու բժշկական սարքավորումները վերագնահատող» աշխատանքային խմբի կողմից հետազայում ենթակա են վերագնահատման, հետևաբար վերոհիշյալ գումարային արտահայտությունները պետք է ընդունել որպես կողմնորոշիչ կամ տեղեկատվական բնույթի:

Ըստ ներմուծող կազմակերպությունների տեղեկություններն ամփոփված են հավելված 2-ում, ըստ առաքման երկրի՝ հավելված 3-ում, ըստ ապրանքային խմբերի՝ հավելված 4-ում:

Ըստ մաքսային արժեքի՝ ներմուծված բեռների շուրջ 44 %-ը առողջապահության բնագավառի բեռներ են, այդ թվում՝ դեղորայք՝ 7.95 մլրդ դրամ մաքսային արժեքով, բժշկական սարքավորումներ և պարագաներ՝ 1.94 մլրդ դրամ մաքսային արժեքով:

Բեռների 44.40 %-ը ներմուծվել է ԱՄՆ-ից, 12.06 %-ը՝ Չինաստանից, 7.38 %-ը՝ Շվեյցարիայից, 5.65 %-ը՝ Ֆրանսիայից, 4.42 %-ը՝ Նիդեռլանդներից, 3.86 %-ը՝ Արաբական Միացյալ Էմիրություններից:

Ընդհանուր առմամբ, ըստ մաքսային արժեքի, բեռների 53.61 %-ը ներմուծվել է նախարարությունների, գերատեսչությունների և պետական այլ կազմակերպությունների հասցեով:

### **Աշխատանքների կատարում և ծառայությունների մատուցում**

2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից բարեգործական որակում է տրվել 58 կազմակերպության կողմից իրականացվող՝ աշխատանքների կատար-

ման կամ ծառայությունների մատուցման ծրագրերի, որոնց գումարային արժեքը կազմում է շուրջ 29,516.50 մլն դրամ (հավելված 5):

Ըստ բնագավառների աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը ունի հետևյալ պատկերը՝

կրթության և գիտության	6,398.90
առողջապահության	6,321.70
հոգևոր	4,318.49
քաղաքաշինության	3,614.23
մշակույթի	2,741.34
սոցիալական	2,452.63
սպորտի	1,448.69
դրամաշնորային	957.17
ջրամատակարարման	698.11
գյուղատնտեսության	240.66
քարոզչական	173.90
բնապահպանության	144.56
այլ	6.12

Հարկ է նշել, որ ծրագրերի գումարային արժեքները նշված են ըստ կազմակերպությունների ներկայացրած հայտերի և ամփոփ տեղեկությունների, ուստի դրանք պետք է ընդունել որպես կողմնորոշիչ կամ տեղեկատվական բնույթի արժեքներ: Ընդ որում՝ նշված ծրագրերի մի մասը շարունակական է՝ մինչև 2015 թվականը:

Ընդհանուր առմամբ, 2011 թվականի ընթացքում հաստատված 248 երկարաժամկետ ծրագրերից 142-ը վերաբերվում են շինարարական աշխատանքների իրականացմանը (կառուցում, վերակառուցում և վերանորոգում): Այդ թվում՝ վերակառուցվել և վերանորոգվել է 51 ջրագիծ, 13 մանկապարտեզ, 29 դպրոց, 4 բուժհաստատություն:

### **Կազմակերպական հարցեր**

Հանձնաժողովը հանդիպումներ է կազմակերպել հանրապետությունում գործող և մարդասիրական օգնություն իրականացնող տեղական ու միջազգային բարեգործական կազմակերպությունների հետ: Անց են կացվել հանդիպումներ, որտեղ քննարկվել են մարդասիրական ծրագրերից աստիճանաբար զարգացման ծրագրերի անցնելու հետ կապված հարցերը: Հարցադրումները հավանության են արժանացել:

Բազմաթիվ այցելություններ են կատարվել իրականացման վայրերում ծրագրերի ընթացքին ծանոթանալու, արդյունավետությունը գնահատելու և սահմանված նպատակներից շեղումներ թույլ չտալու նպատակով:

2011 թվականի ընթացքում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 18 նիստ, ընդունվել է 1172 որոշում:

Բոլոր հարցերի վերաբերյալ հանձնաժողովի որոշումներն ընդունվել են բացառապես շահագրգիռ նախարարությունների եզրակացությունների հիման վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի բիզնես գործընթացների կանոնակարգման միջոցառումների ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1890-Ն որոշմամբ լրացում և փոփոխություններ են կատարվել հանձնաժողովի կանոնադրության մեջ՝ սահմանելով հանձնաժողովի աշխատակազմի գործառույթները, լիազորություններն ու պարտականությունները:

Հանձնաժողովի գործունեությունը և ծրագրերի ընթացքը պարբերաբար լուսաբանվել են զանգվածային լրատվամիջոցներով:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**  
**2011 թվականի ընթացքում ՀՀ ներմուծված**  
**մարդասիրական օգնության բեռների վերաբերյալ**  
**(ըստ կազմակերպությունների)**

ՀՎՀՀ	Կազմակերպության անունը	Մաքսային արժեքը
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>22,480,006,006</b>
00005614	«Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան» ՊՈԱԿ	11,656,783
00006023	Հայկական կարմիր խաչի ընկերություն	3,092,679
00006479	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ)	183,457,472
00008519	ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ	621,975,974
00008887	ՀՀ ԿԳՆ «Բժշկական սար. միջազգ. հետրուսական ուս. կենտրոն» ՊՈԱԿ	2,432,533
00009237	«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ	350,167,858
00009615	«Արաբկիր» բժշկ. համալիր, երեխ. և դեռահ. առողջ. պահպ. ինստ.» ՍՊԸ	1,557,893
00009631	ՀՀ ԳԱԱ «Հիմնարար գիտական գրադարան» ՊՈԱԿ	26,455,787
00010235	«Ռ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	161,376
00032803	Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճ.	308,847,429
00040233	Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ	1,982,574
00047094	«Քարավան 88» բարեգործայան հասարակական կազմակերպության	66,861,858
00055581	«Սակուրա» բարեգործական ՀԿ	3,856,332
00057312	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ	461,387,476
00068196	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ	224,565,988
00078217	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	21,135,050
00081288	«Ուտոպիանա ԱՄ» մշակութային ստեղծագործական ՀԿ	357,803
00084123	«Հյուսիս գիգանթի ընդ փիս» բարեգործական հիմնադրամ	6,651,196
00085864	«Հայ-Ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» ՀԿ	77,045,395
00091195	«Հայաստանի բարեկամներ» մարդասիր. կազմակ. Հայաստանի մասնաճ.	32,205,646
00107012	«Սարդարապատ» բարեգործական ՀԿ	29,975,982
00420726	Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնեական եկեղեցի	3,702,419
00434506	«Ֆրանսիական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամ	2,281,582
00438145	«Շողիկ» հայկական բարեգործայան ՀԿ	71,697,356
00448284	«Հուսո առազաստ» բնակչ. անապահով խավ. աջակց. կազ	293,048
00800135	«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ	5,124,162
00803072	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ	335,876,108
00837811	«Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիա» ՀԿ	15,432,891
01002597	«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ	36,456,987
01002804	«Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	94,901,684
01003187	«Կամրջակ» սոցիալ-բարեգործական ՀԿ	24,248,262
01008638	«Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխ. կենտրոն» ՊՈԱԿ	8,436,750
01202252	«Վերարտ. առողջ., պերինատ., մանկաբարձ. և գինեկոլ. հանրապ. ինստ.» ՓԲԸ	56,450,269
01245672	«Սիմոնյան» կրթական հիմնադրամ	585,953,806
01501229	«Հայաստանի թեթեւ ատլետիկայի ֆեդերացիա» ՀԿ	29,563,176
01503283	«Շեն» հասարակական բարեգործական կազմակերպություն	134,792,475
01505795	«Ուսանողական ջրկատների հանրապետական շտաբ» ՀԿ	62,634
01506627	«Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	421,734
01506928	«Երեւանի պետական համալսարան» ՊՈԱԿ	248,026,192
01508793	«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՊՓԲԸ	2,629,106
01511187	«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ	2,680,757
01512885	«Հայ օգնության միություն» բարեգործական ՀԿ	117,497,573
01513717	«Ազգպե» բարեգործական կազմակերպություն	82,451,777
01513853	«Մեծն Ներսես» բարեգործական ՀԿ	83,711,118
01533153	«Հովարդ Կարապյոզյան» բժշկական բարեգործական կազմակերպություն	30,386,509

01533403	«Առաքելություն արևելք» մարդ. օգնության կազմ. Հայաստանի մասնաճյուղ	10,468,842
01533574	«Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամ	10,764,216
01533651	«Գ.Մելիքյանի Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամ	136,488,172
01536513	Մեծ Բրիտանական «Հայր Թրասթ» ընկերության հայկական մասնաճյուղ	24,201,019
01538293	ՀՀում ԼՂՀ-ի մշտական ներկայացուցչություն	261,141,643
01538594	Ֆրանս. «Բժիշկներ առանց սահմանների» միության Հայաստանի մասնաճյուղ	205,015,814
01541443	«Հայ ամերիկյան առողջության կենտրոն» հիմնադրամ	6,417,830
01555988	Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշնի Երևանի մասնաճյուղ	95,107,941
01557357	«Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամ	317,239,714
01558429	«ԱՅԲ» կրթական հիմնադրամ	19,665,982
01565354	«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ	907,283,852
01574053	ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի Հայաստանի ներկայացուցչություն	407,319,518
01805335	«Հայաստանի թենիսի ֆեդերացիա» ՀԿ	760,796
02204515	«Շենգավիթ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	29,654,615
02214044	«Հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ	1,359,900
02232835	«Ղողանջ» սոցիալիքավահոգեբանական ՀԿ	2,503,882
02502548	«Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» ՀԿ	1,921,058
02506317	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ	121,346,400
02507171	ՀՀ առողջապահության նախարարություն	2,228,515,515
02507456	«Հայաստան» համահայկական հիմնադրամ	178,367,995
02507509	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն	59,004,945
02507911	«Հայաստանի մանկական ստոցացիա» բարեգործական ՀԿ	41,792,126
02508003	ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	7,489,399,898
02517115	«Հայ օգնության ֆոնդ» բարեգործական կազմակ. Հայաստանի մասնաճյուղ	118,957,405
02521266	«Հայաստանի բադմինտոնի ֆեդերացիա» ՀԿ	1,600,436
02522586	«Հայաստանի հեծանվային մարզաձևի ֆեդերացիա» ՀԿ	858,742
02527787	«Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպություն	1,929,724
02528025	«Երևան» հիմնադրամ	795,531,941
02528755	«Վոլոդ Կիժն Ինտեռնեյշնլ» միջազգ. բարեգ. կազմ. Հայաստանի մասնաճ.	824,211,626
02529843	Հայաստանի հրեական համայնք	264,919
02536976	«Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիա	2,411,562
02538577	«Հայկական առազաստանավային սպորտի ֆեդերացիա» ՀԿ	6,682,402
02539777	Արարատյան հայրապետական թեմ	8,496,276
02545539	«Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» ՀԿ	1,933,532
02546033	Լեհական համագործակցության «Պոլոնիա» բարեգործական ՀԿ	933,177
02547542	«Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» ՀԿ	777,511
02549194	«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» ՀԿ	15,077,454
02559841	«Համակայկական խաղերի համաշխարհային կոմիտե» ՀԿ	1,092,744
02560522	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ	7,504,075
02565518	«ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ» ՊԿՀ	17,752,346
02565955	«Բանանց» ֆուտբոլային ակումբ» ՀԿ	77,328,224
02566915	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն	204,223,947
02567796	Հայաստանում գերման. կարմիր խաչի Բադեն-Վյուրտենբերգի երկրամ. կազմ.	1,484,271
02592526	«Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան» բարեգ. հիմնադրամ	5,362,381
02599291	«Արագիլ» վերարտադրողական բժշկության աջակցման հիմնադրամ	49,646,658
02705657	«Մատենադարան» հիմնադրամ	698,689,426
02706676	Հայ-ֆրանսիական սոցիալ-մշակութային բարեգործական ՀԿ	4,037,255
03503438	«Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» ՀԿ	4,434,494
03801255	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ	70,998,950
03804631	«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	90,961,418
04201153	Արտաշատի քաղաքապետարան	21,156,400
04703401	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	619,473,422
04706418	Հայաստանյազ առաքելական սր. եկեղեցու Գեղարքունյաց թեմ	6,004,098
04717139	«ԵՀԽ հայաստանյան կլոր սեղան» հիմնադրամ	10,317,457
05005559	«Ուզանի Զորավար Անդրանիկի անվան միջակարգ դպրոց» ՊՈԱԿ	13,744,908
05012167	«Փարպի» բարեգործական հիմնադրամ	136,690
05300705	Թալինի քաղաքապետարան	11,056,300
05305424	«Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ	2,364,312
05500489	«Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց» ՓԲԸ	60,588,426
05508344	«Մեղվիկ» մանկապատանեկան ուսուց. կենտրոն» ՀԿ	3,431,537
05511175	«Գյումրու թիվ 31 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	250,832

05513266	«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն	169,442,252
05514397	«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ	4,004,555
05521918	«Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ	3,604,500
05531394	«SPFA» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղ	10,499,844
05535163	«Վիեննա վիժն» բարեգործական հիմնադրամ	735,402
05800879	Հայկականի գյուղապետարան	27,427,621
05806438	Քամիլիաների միաբանություն «Ս.Քամիլիո» բարեգործական հիմնադրամ	84,507,728
06805048	«Լիմեն-Սպիտակ բարօրություն» ՀԿ	7,862,645
06805538	«Քեզ համար Սպիտակ» բարեգործական հիմնադրամ	34,474,691
06909224	«Սեր Հայրենիքին» բարեգործական ՀԿ	9,828,900
06910651	«Վանաձորի 2-րդ հիվանդանոց» ՊՓԲԸ	86,666,418
06925855	«ԱՌՄ» բարագործական ՀԿ	100,781,774
06931074	Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամ	26,079,050
06940684	«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ	3,287,304
06943485	«Երուսաղ. բժշկ. սր. Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգ. հիմնադրամ	29,912,714
07203481	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ	426,499,969
08202927	ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ծովասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	28,303,271
08803091	«Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ	9,471,880
08906094	«Սյունիք» բարագործական ՀԿ	17,702,212
09104402	«Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացման աջակցություն» հիմնադրամ	98,066,469
09414191	Քաջարանի քաղաքապետարան	4,402,517
09803383	Սիսիանի քաղաքապետարան	1,565,860
90005509	ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն	196,759,082
90006355	ԼՂՀ առողջապահության նախարարություն	3,115,846
90012511	«Հայ օգնության միություն» բարեգործական ՀԿ-ի Արցախի մասնաճյուղ	558,447
90012554	«Արցախի ազատամարտիկների միություն» ՀԿ	75,237,569
90013514	Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն	2,321,220
90023094	ԼՂՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամ	290,527,856

Ըստ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**2011 թվականին ՀՀ ներմուծված մարդասիրական օգնության բեռների վերաբերյալ  
 (ըստ երկրների)**

Ե ր Կ ի ր Ը	Ն Ե Ր Մ Ո Ւ Ծ Ո Ւ Մ				Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը
	I եռամս.	II եռամս.	III եռամս.	IV եռամս.	
<b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</b>	<b>5,643,906,715</b>	<b>5,998,189,804</b>	<b>5,185,410,165</b>	<b>5,652,499,322</b>	<b>22,480,006,006</b>
ԱՄՆ	3,549,619,230	1,370,984,036	2,798,606,384	2,262,254,646	9,981,464,296
Զինաստան	11,172,672	2,495,633,955	76,927,405	127,663,791	2,711,397,823
Շվեյցարիա	306,311,826	139,816,794	777,686,272	434,941,285	1,658,756,177
Ֆրանսիա	172,236,529	312,693,519	117,663,496	667,675,175	1,270,268,719
Նիդեռլանդներ	179,492,660	68,660,214	309,621,878	435,951,847	993,726,599
ՄԱԷ	60,535,226	296,133,540	218,767,024	291,806,902	867,242,692
Կորեայի Հանրապետություն	621,975,974	18,113,648		3,917,394	644,007,016
Իտալիա	103,020,352	262,513,498	207,894,436	35,792,008	609,220,294
Ռուսաստան	337,433,295	97,288,285	48,959,750	99,609,535	583,290,865
Ուկրաինա	5,792,398	149,558,143		211,750,815	367,101,356
Գերմանիա	28,381,996	107,804,469	100,093,730	123,816,269	360,096,464
Բելգիա	1,549,295	143,147,710	57,698,335	5,197,227	207,592,567
Չեխիա	7,792,298	26,299,650	32,696,390	121,879,999	188,668,337
Իռլանդիա		161,376	66,513,380	119,093,847	185,768,603
Լեհաստան		933,177		182,765,032	183,698,209
Լիբանան	64,758,390		57,728,148	25,941,035	148,427,573
Մեծ Բրիտանիա	30,570,878	35,580,839	74,780,731	6,296,980	147,229,428
Իրան	13,245,375		120,996,100	12,242,740	146,484,215
Թուրքիա	21,030,887	24,187,447	17,489,696	79,552,575	142,260,605
Ավստրիա	16,878,630	59,884,032	1,921,058	62,137,925	140,821,645
Դանիա	18,841,889	114,201,244	3,507,316		136,550,449
Բելոռուս	12,403,223	116,796,928		3,706,131	132,906,282
Ճապոնիա				121,346,400	121,346,400
Հնդկաստան	18,066,802	282,334	29,833,295	59,710,487	107,892,918
Ֆինլանդիա		79,319,096			79,319,096
Վրաստան	2,204,707	39,859,890	1,918,072	17,960,694	61,943,363
Կիպրոս		15,951,946		27,961,430	43,913,376
Իսպանիա			25,131,069	14,839,348	39,970,417
Սյանգան (Հոնկոնգ)	30,296		5,287,975	27,790,385	33,108,656
Ռումինիա				32,664,632	32,664,632
Իսրայել	12,405,929	2,463,578	1,558,228	12,774,797	29,202,532
Սլովակիա			27,362,987		27,362,987
Բուլղարիա			1,564,512	21,118,787	22,683,299
Սիրիա	22,677,091				22,677,091
Էստոնիա	21,712,358				21,712,358
Սինգապուր		13,633,366			13,633,366
Պակիստան		5,259,822			5,259,822
Շվեդիա			2,711,044	1,917,470	4,628,514
Մալազիա	2,858,281	162,840	221,404		3,242,525
Ղազախստան	908,228				908,228
Կանադա		864,428			864,428
Հվ. Աֆրիկյան Հանրապետություն				421,734	421,734
Եգիպտոս			270,050		270,050

Ըստ ՀՀ կառավարությանն աղբյուր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների



**ՏԵՂԵԿԱԼՔ**  
**2011 թվականի ընթացքում ՀՀ ներմուծված մարդասիրական օգնության բեռների վերաբերյալ**  
**(ըստ ԱՏԳ ԱԱ-ի խմբերի)**

Հ/Հ	ԱՏԳ ԱԱ-ի խումբը	Ապրանքի անվանումը	Մաքսային արժեքը	
<b>Ընդամենը</b>			<b>22,480,006,006</b>	<b>%</b>
1	01-05	Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	1,064,553	0.00
2	06-14	Բուսական ծագման արտադրանք	245,520,405	1.09
3	15	Կենդանական և բուսական ծագման յուղեր ու ճարպեր	69,137,148	0.31
4	16-24	Պատրաստի սննդի արտադրանք	222,690,313	0.99
5	25-27	Հանքահումքային արտադրանք	6,448,444	0.03
6	28-38	Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբեր. ճյուղերի արտադրանք (այդ թվում՝ դեղորայք)	8,562,035,774	38.09
7	39-40	Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	129,367,240	0.58
8	41-43	Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	10,442,280	0.05
9	44-46	Փայտ և փայտյա իրեր	7,252,690	0.03
10	47-49	Թուղթ և թղթից իրեր	196,819,042	0.88
11	50-63	Մանածագործական իրեր	2,232,144,770	9.93
12	64-67	Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	808,765,216	3.60
13	68-70	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	190,618,563	0.85
14	71	Թանկարժեք և կիսաթանկարժեք իրեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	51,169,822	0.23
15	72-83	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	633,276,257	2.82
16	84-85	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	3,258,483,995	14.50
17	86-89	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	2,421,723,876	10.77
18	90-92	Սարքեր և ապարատներ (այդ թվում բժշկական)	1,379,617,255	6.14
19	93	Ձենք և զինամթերք		0.00
20	94-96	Տարբեր արդյունաբերական ապրանքներ (կահույք, խաղալիքներ, մարզագույք)	2,048,395,601	9.11
21	97	Արվեստի ստեղծագործություններ	5,032,762	0.02

Ըստ ՀՀ կառավարության աղբյուրի պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**2011 թվականի ընթացքում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
 հանձնաժողովի որոշումներով հաստատված ծրագրերի մասին**

ՀՀ	Ծրագրի իրականացնող կազմակերպության անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	Որոշման ամսաթիվը և համարը	Բնագավառը	Մարզը, բնակավայրը, շահառուն	Աշխատանքների համառոտ նկարագիրը	Ծրագրի բյուջեն	Ծրագրի սկիզբը և ավարտը	Ծանոթություն
1.	«Հայաստան» համահայկական հիմնադրամ		21.01.2011 Մ-033-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգի 10-րդ և 11-րդ գոտիների բարելավման նախագծման փորձաքննություն	800,000 դրամ	29.12.2010- 29.04.2011	
			21.01.2011 Մ-036-Ա	գյուղատնտ.	Տավուշ	Տավուշի մարզի գյուղական համայնքներին անվճար հիմունքներով գյուղտնտեսական տրամադրում	5,782,000 դրամ	22.10.2010- 22.02.2011	
			21.01.2011 Մ-037-Ա	կրթության	Երևան	Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի աուդիո-վիզուալ սրահի վերանորոգում և կահավորում	6,609,550 դրամ	22.12.2010- 29.03.2011	Փոփ. 11.03.2011 Մ-165-Ա
			18.02.2011 Մ-083-Ա	առողջապահ.	Սյունիք	Կապան քաղաքի բժշկական կենտրոնի կաթսայատան կառուցման նախագծում	1,488,000 դրամ	07.02.2011- 07.05.2011	
			18.02.2011 Մ-084-Ա	կրթության	ԼՂՀ	Շուշի քաղաքի Եզնիկ Մոզիյանի անվան մասնագիտական ուսումնական դպրոցի կառուցման և Բեկոր Աշոտի, Փաշայանի, Իշխանյանի փողոցներին հարող տարածքի ինժեներակառուցական հետազոտություն և գեոդեզիական հանույթի աշխատանքներ	4,276,000 դրամ	31.01.2011- 31.05.2011	
			18.02.2011 Մ-085-Ա	կրթության	Արմավիր	Լուսապուր գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում	4,204,500 դրամ	18.01.2011- 18.05.2011	
			18.02.2011 Մ-086-Ա	սոցիալական	Լոռի	Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզին անհրաժեշտ կահույքով ապահովում	7,347,500 դրամ	20.01.2011- 20.05.2011	
			18.02.2011 Մ-087-Ա	սոցիալական	Լոռի	«Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի համակարգչային դասարանի կահավորում	849,000 դրամ	18.01.2011- 18.05.2011	
			18.02.2011 Մ-088-Ա	կրթության	Շիրակ	Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերանորոգում	4,057,376 դրամ	18.01.2011- 18.05.2011	
			18.02.2011 Մ-089-Ա	կրթության	ԼՂՀ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների կահավորում	64,766,700 դրամ	18.01.2011- 18.08.2011	
			18.02.2011 Մ-090-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	ԼՂՀ ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողության օժանդակում	8,970,000 դրամ	26.01.2011- 26.12.2012	
			18.02.2011 Մ-091-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Հաղորտի շրջանի Տող գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում	7,400,000 դրամ	12.01.2011- 12.06.2011	
			18.02.2011 Մ-092-Ա	այլ	ՀՀ, ԼՂՀ	«Հեռուստամարաթոն - 2011»-ի կազմակերպում	100,000,000 դրամ	21.01.2011- 31.12.2011	
			11.03.2011 Մ-170-Ա	կրթության	Շիրակ	Աշոց գյուղի նոր միջնակարգ դպրոցի կառուցման նախագծում	20,800,000 դրամ	31.01.2011- 31.07.2011	

			11.03.2011 Մ-171-Ա	սոցիալական	Լոռի	Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզի մարզահրապարակի կահավորում	795,000 դրամ	01.02.2011- 01.05.2011	
			11.03.2011 Մ-174-Ա	գյուղատնտ.	Տավուշ	Լուսաձոր գյուղի տոհմային կովաբուծարանի մասնակի վերանորոգում	2,971,220 դրամ	14.02.2011- 14.05.2011	
			01.04.2011 Մ-213-Ա	կրթության	ԼՂՀ	Ստեփանակերտ քաղաքի Ա.Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում	27,597,500 դրամ	18.03.2011- 30.08.2011	
			01.04.2011 Մ-214-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրաղբյուրի կապտաժների վերակառուցման նախագծում	5,600,000 դրամ	18.03.2011- 18.09.2011	
			01.04.2011 Մ-215-Ա	կրթության	Երևան	Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում	28,368,300 դրամ	21.03.2011- 21.08.2011	
			01.04.2011 Մ-226-Ա	սոցիալական	Լոռի	Վանաձոր քաղաքի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի համակարգչային դասարանի վերանորոգում և համակարգիչների ձեռքբերում	3,735,400 դրամ	14.02.2011- 04.05.2011	
			01.04.2011 Մ-227-Ա	կրթության	Տավուշ	Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում	4,541,700 դրամ	11.03.2011- 11.06.2011	
			22.04.2011 Մ-270-Ա	առողջապահ.	Կոտայք	Չարենցավան քաղաքի բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի ընդունարանի և աստիճանավանդակի հիմնանորոգում	12,991,865 դրամ	28.03.2011- 28.06.2011	
			22.04.2011 Մ-271-Ա	կրթության	Արագածոտն	Օշական գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգման նախագծում	5,140,000 դրամ	03.03.2011- 03.08.2011	
			22.04.2011 Մ-272-Ա	կրթության	Երևան	Գայի անվան թիվ 129 միջնակարգ դպրոցի դահլիճի կահավորում	5,501,250 դրամ	18.03.2011- 18.08.2011	
			22.04.2011 Մ-280-Ա	առողջապահ.	Շիրակ	«Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկոլյուզային հիվանդանոց» ՓԲԸ-ն մասնակի կահավորում	1,309,200 դրամ	12.04.2011- 12.07.2011	
			22.04.2011 Մ-281-Ա	գյուղատնտ.	Տավուշ	Սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծման աշխատանքների կազմակերպում	2,968,280 դրամ	26.01.2011- 26.06.2011	
			16.05.2011 Մ-288-Ա	սոցիալական	Լոռի	Արծնի գյուղի գազաֆիկացում	30,429,200 դրամ	05.04.2011- 05.08.2011	
			13.05.2011 Մ-305-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Մարտունու շրջանի Սարգսաշե գյուղի ջրատարի վերակառուցում	50,019,227 դրամ	27.04.2011- 27.12.2011	
			13.05.2011 Մ-312-Ա	կրթության	Տավուշ	Ազատամուտ գյուղի միջնակարգ դպրոցի երկու դասարանների կահավորում	1,120,000 դրամ	29.04.2011- 29.07.2011	
			13.05.2011 Մ-313-Ա	կրթության	ԼՂՀ	Ստեփանակերտ քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցի կահավորում	49,976,500 դրամ	26.04.2011- 30.08.2011	
			13.05.2011 Մ-314-Ա	գյուղատնտ.	Տավուշ	Սարիգյուղում մեխանիկական արհեստանոցի կառուցում՝ սահմանամերձ 14 գյուղերի ագրոտեխնիկայի անվճար սպասարկման համար	15,448,950 դրամ	22.03.2011- 22.06.2011	
			13.05.2011 Մ-315-Ա	սոցիալական	Երևան	«Նորք տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման նախագծում	1,300,000 դրամ	22.04.2011- 22.08.2011	
			13.05.2011 Մ-316-Ա	առողջապահ.	Երևան	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգման նախագծում	1,540,000 դրամ	14.04.2011- 14.07.2011	
			03.06.2011 Մ-407-Ա	կրթության	ԼՂՀ	Մարտունու շրջանի Գիշի գյուղի նորակոոյց դպրոցի կահավորում	29,853,500 դրամ	16.05.2011- 16.10.2011	

		03.06.2011 Մ-408-Ա	կրթության	ԼՂՀ	Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի նորակառուց դպրոցի կահավորում	21,952,900 դրամ	16.05.2011- 16.10.2011	
		03.06.2011 Մ-433-Ա	կրթության	ԼՂՀ	Հաղրուփի շրջանի Տող գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում	1,005,829 դրամ	19.05.2011- 19.08.2011	
		17.06.2011 Մ-439-Ա	ճանշին	ՀՀ, ԼՂՀ	Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի ծածակի հորոտում և լաբորատոր փորձարկում	500,000 դրամ	23.05.2011- 23.08.2011	
		17.06.2011 Մ-466-Ա	ջրամատակ.	Տավուշ	«Այգեհովիտ» պոմպակայանի էլեկտրական մասի մոնտաժում	19,800,000 դրամ	23.05.2011- 23.08.2011	
		17.06.2011 Մ-467-Ա	ջրամատակ.	Տավուշ	Խաշթառակ-Դիտավան ոռոգման ջրանցքի կառուցման նախագծում	2,030,000 դրամ	02.06.2011- 02.09.2011	
		17.06.2011 Մ-476-Ա	սոցիալական	ՀՀ	Աջակցել Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի նորածիններ (մինչև 1 տարեկան) ունեցող սոցիալապես անապահով ընտանիքներին՝ երեխայի խնամքի կազմակերպման գործում	18,000,000 դրամ	15.06.2011- 31.12.2012	
		22.07.2011 Մ-594-Ա	կրթության	ԼՂՀ	Շուշի քաղաքի Խ.Արուվյանի անվան հիմնական դպրոցի կահավորում	35,122,000 դրամ	03.06.2011- 03.12.2011	
		22.07.2011 Մ-595-Ա	կրթության	ԼՂՀ	Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների և հատուկ կարիքավոր երեխաների համար նախատեսված դասասենյակների կահավորում	58,944,000 դրամ	28.06.2011- 28.09.2011	
		22.07.2011 Մ-596-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Հաղրուփի շրջանի Տող գյուղի ջրամատակարման համակարգի վերակառուցում	94,201,180 դրամ	18.05.2011- 18.05.2012	
		22.07.2011 Մ-597-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Մարտունի քաղաքի Վ.Խաչատրյանի, Վ.Արզումանյանի և Ազատամարտիկների փողոցներով անցնող կոլեկտրների կառուցման հեղինակային հսկողություն	900,000 դրամ	06.04.2011- 06.09.2011	
		22.07.2011 Մ-623-Ա	առողջապահ.	Երևան	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում	47,268,899 դրամ	01.07.2011- 01.12.2011	
		22.07.2011 Մ-624-Ա	կրթության	Տավուշ	Նոր Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում	1,940,600 դրամ	11.07.2011- 11.11.2011	
		22.07.2011 Մ-635-Ա	կրթության	ԼՂՀ	Շուշի քաղաքի հանրային գրադարանի համար համակարգիչների ձեռքբերում	2,270,000 դրամ	01.07.2011- 01.09.2011	
		05.08.2011 Մ-667-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն	170,000 դրամ	15.07.2011- 14.10.2011	
		26.08.2011 Մ-733-Ա	կրթության	Տավուշ	Դիտավան գյուղի դպրոցի տարածքում տարրական դասարանների մասնաշենքի կառուցում	71,077,100 դրամ	15.07.2011- 15.03.2012	
		26.08.2011 Մ-734-Ա	կրթության	Արմավիր	Արմավիր քաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոցի կահավորում	3,238,625 դրամ	04.08.2011- 04.10.2011	
		26.08.2011 Մ-735-Ա	կրթության	Արմավիր	Բաղրամյան գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում	921,925 դրամ	04.08.2011- 04.10.2011	
		26.08.2011 Մ-736-Ա	սոցիալական	Երևան	«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 3-րդ և 4-րդ հարկերի վերանորոգում	61,290,550 դրամ	15.07.2011- 15.12.2011	
		23.09.2011 Մ-802-Ա	կրթության	Տավուշ	Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների համակարգչային դասարանների կահավորում	30,960,000 դրամ	22.08.2011- 28.02.2012	
		23.09.2011 Մ-803-Ա	կրթության	Շիրակ	Աշոցք գյուղի 360 աշակերտի համար նոր միջնակարգ դպրոցի կառուցում	445,500,000 դրամ	18.07.2011- 20.05.2013	

			30.09.2011 Մ-839-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Հաղորդի շրջանի Ուխտածոր գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	21,018,761 դրամ	11.08.2011- 11.11.2011	
			30.09.2011 Մ-842-Ա	կրթության	ԼՂՀ	Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական արական դպրոցի կառուցման նախագծման փորձաքննություն	800,000 դրամ	14.09.2011- 14.11.2011	
			30.09.2011 Մ-849-Ա	այլ	Արագածոտն	Մարզի համայնքների ուսումնական, մշակութային կառույցների և ջրամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և հետազոտություն	1,600,000 դրամ	15.09.2011- 15.12.2011	
			30.09.2011 Մ-854-Ա	կրթության	Շիրակ	Աշոց գյուղի նոր միջնակարգ դպրոցի սպորտային դահլիճի և հանդիսությունների սրահի կառուցում	181,254,000 դրամ	08.09.2011- 31.08.2013	
			21.10.2011 Մ-884-Ա	կրթության	Կոտայք	Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում	1,256,577 դրամ	12.10.2011- 30.12.2011	
			21.10.2011 Մ-898-Ա	ջրամատակ.	Տավուշ	Այգեհովիտ և Վազաշեն համայնքների ոռոգման համակարգերի վերակառուցման 2-րդ փուլ	65,882,100 դրամ	08.09.2011- 08.04.2012	
			21.10.2011 Մ-899-Ա	այլ	Գեղարքունիք	Մարզի համայնքների ուսումնական, վարչական և մշակութային կառույցների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և հետազոտություն	600,000 դրամ	20.09.2011- 20.12.2011	
			21.10.2011 Մ-900-Ա	սոցիալական	Շիրակ	Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծում	2,750,000 դրամ	23.09.2011- 23.12.2011	
			11.11.2011 Մ-984-Ա	կրթության	Արագածոտն	Մելիք գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	74,372,500 դրամ	26.08.2011- 30.12.2011	
			11.11.2011 Մ-985-Ա	սոցիալական	Գեղարքունիք	Մարզի համայնքների ջրամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և հետազոտություն	700,000 դրամ	20.09.2011- 20.12.2011	
			11.11.2011 Մ-987-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Քարինտակ գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	110,000,000 դրամ	11.08.2011- 11.08.2012	
			01.12.2011 Մ-1068-Ա	այլ	ՀՀ	«Հեռուստամարաթոն 2011»-ի շրջանակներում «ՀԱՅՓՈՍ»-ի բաժանմունքներում քարոզչական միջոցառումների և դրամական նվիրատվությունների հավաքագրման կազմակերպում	73,896,200 դրամ	10.10.2011- 10.12.2012	
			23.12.2011 Մ-1121-Ա	կրթության	Տավուշ	Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում	1,718,550 դրամ	08.12.2011- 08.04.2012	
			23.12.2011 Մ-1122-Ա	ջրամատակ.	ԼՂՀ	Հաղորդ քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն	3,800,000 դրամ	21.11.2011- 21.11.2013	
			23.12.2011 Մ-1131-Ա	առողջապահ.	Կոտայք	«Արովանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի ծնարանային և հետծննդյան բաժինների հիմնանորոգման նախագծում	2,650,000 դրամ	23.11.2011- 30.12.2011	
2.	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	Հայկական բարեգործական ընդհանուր միություն	11.03.2011 Մ-139-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի նոր մասնաշենքի կառուցում	134,336,400 դրամ	01.03.2011- 31.12.2012	
			01.04.2011 Մ-199-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Գևորգյան հոգևոր ճեմարանի 2-րդ մասնաշենքին կից հուշապատի կառուցում զոհված հոգևորականների հիշատակի համար	147,578,160 դրամ	10.04.2011- 31.12.2012	
		ԵՀԽ Կլոր սեղան հիմնադրամ	13.05.2011 Մ-311-Ա	հոգևոր	ՀՀ	«Քրիստոնեական ժամանակակից ընտանիքը հասարակության հենք» գրքույկի տպագրում	740,000 դրամ	20.05.2011- 31.12.2011	

Հայկական բարեգործական ընդհանուր միություն	03.06.2011 Մ-406-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Երեմյան խցերի վերանորոգում	692,147,830 դրամ	25.05.2011- 31.05.2013	
	17.06.2011 Մ-479-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Մայր Աթոռի կաթսայատան երեք կաթսաների վերանորոգում	16,000,000 դրամ	15.06.2011- 31.12.2011	
	28.06.2011 Մ-496-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Հին վեհարանի շենքի նորոգում	477,462,090 դրամ	25.04.2011- 31.12.2012	
	01.07.2011 Մ-544-Ա	հոգևոր	Կոտայք	Գեղարդավանքի հարավային կողմի օժանդակ կառույցների նորոգում և նորոգված տարածքում գրատան ստեղծում	14,261,500 դրամ	25.06.2011- 31.12.2011	
	22.07.2011 Մ-598-Ա	հոգևոր	Գեղարքունիք	Նորատուզի 9-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցու ամբողջական վերականգնում	389,588,680 դրամ	15.07.2011- 31.12.2011	
	05.08.2011 Մ-668-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում	1,712,891,860 դրամ	25.07.2011- 31.12.2013	
	05.08.2011 Մ-669-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Մկրտարանին կից տարածքի բարեկարգում	30,483,830 դրամ	20.07.2011- 31.12.2011	
	05.08.2011 Մ-670-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Միաբան. շենքի նկուղային հարկի պատուհանների և մասնաշենքերի կամարածների մուտքերի համար ճաղաշարերի ու դարպասների պատրաստում և տեղադրում	8,863,280 դրամ	25.07.2011- 30.10.2011	
	09.09.2011 Մ-792-Ա	հոգևոր	Լոռի	Վանաձորի հայորդաց տան շքամուտքերի կառուցում	4,796,070 դրամ	09.09.2011- 31.12.2011	
	09.09.2011 Մ-793-Ա	հոգևոր	Լոռի	Վանաձորի սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցու հյուսիսարևելյան մասում հանդիսությունների հարթակի կառուցում	5,567,370 դրամ	09.09.2011- 30.11.2011	
	09.09.2011 Մ-794-Ա	հոգևոր	Լոռի	Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու Մատուռ խորանի կառուցում	7,012,570 դրամ	09.09.2011- 31.12.2011	
	30.09.2011 Մ-848-Ա	հոգևոր	Շիրակ	Հառիճավանքի վերակառուցման 2-րդ փուլի շինարարական աշխատանքներ	269,603,270 դրամ	23.09.2011- 30.06.2013	
	21.10.2011 Մ-895-Ա	հոգևոր	Լոռի	Վանաձորի սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգում	47,367,700 դրամ	20.10.2011- 28.02.2012	
	21.10.2011 Մ-896-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Սբ. Էջմիածնի վարչական բաժինների աշխատասենյակներում օդորակիչների տեղադրում	8,823,000 դրամ	20.10.2011- 31.12.2011	
	11.11.2011 Մ-981-Ա	հոգևոր	Գեղարքունիք	Սևանի Սբ. Կարապետ եկեղեցու մկրտության ավազանի վերականգնում	1,138,350 դրամ	30.10.2011- 31.12.2011	
	11.11.2011 Մ-982-Ա	հոգևոր	Երևան	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ճաղաշարերի պատրաստում և տեղադրում	11,648,240 դրամ	04.11.2011- 28.02.2012	
	23.12.2011 Մ-1123-Ա	կրթության	Էջմիածին	Էօրնեկեան հանրակրթական դպրոցի աշակերտներին հազուստի պատրաստում	6,701,000 դրամ	15.12.2011- 21.04.2012	
	23.12.2011 Մ-1127-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Մայր Տաճարի Իջման Սեղանի և Կաթողիկոսական տապանաքարերի վերականգնում	1,262,140 դրամ	09.12.2011- 15.01.2012	
	23.12.2011 Մ-1128-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Գանձատան և միաբանական շենքը վանատանը կապող սրահի տանիքների հակասառեցման համակարգի կառուցում	2,794,410 դրամ	25.11.2011- 31.01.2012	
	23.12.2011 Մ-1129-Ա	հոգևոր	Մայր Աթոռ	Մայրավանքի մոմավառության սրահի նախագծանախահաշվային աշխատանքներ	12,007,070 դրամ	08.12.2011- 14.04.2012	
13.01.2012 (11.11.2011)	հոգևոր	Երևան	Ահարոնյան 2/2 հասցեում գտնվող անապահով երեխաների աջակցության կենտրոնի շենքի	10,013,970 դրամ	04.11.2011- 31.01.2012		

			Մ-1168-Ա			պատուհաններին և դռներին ճաղաշարերի տեղադրում			
3.	Հայկական բարեգործական ընդանհուր միության Հայաստանի ներկայացուցչություն	սփյուռքահայ բարերարներ Պերճ Սերգրակայան և Նազար Նազարյան	18.02.2011 Մ-041-Ա	քաղաքաշին.	Երևան	Մելիք Ադամյան 2/2 հասցեում Հայկական բարեգործական ընդանհուր միության Երևանյան կենտրոնատեղի ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցում	2,132,200,000 դրամ	01.12.2010- 31.12.2013	
		Հայկական բարեգործական ընդանհուր միության ԱՄՆ	23.12.2011 Մ-1133-Ա	առողջապահ.	Երևան	«Ոսկրածուծի դռնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին նոր սարքավորումների տրամադրում	15,000 ԱՄՆ-ի դոլար	10.11.2011- 29.02.2012	
4.	«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնդրամ	«Հայ ավետարանի առաքելություն» ոչ առևտրային կազմակերպություն - ԱՄՆ	18.02.2011 Մ-042-Ա	առողջապահ.	Շիրակ	Գյումրի քաղաքի սակավապահովված ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, մանկատներին, ծերանոցներին անվճար բուժսպասարկում, ատամնաբուժական, ակնաբուժական ծառայությունների մատուցում, դեղորայքի անվճար տրամադրում	217,500,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
5.	«Առդա» բարեգործական հիմնդրամ		18.02.2011 Մ-043-Ա	սոցիալական	Շիրակ	Գյումրու «Առդա» նախակրթարանի 80 սաների և 18 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում	127,500,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
			18.02.2011 Մ-044-Ա	սոցիալական	Շիրակ	Գյումրու «Անի-Պարտեզ» նախակրթարանի 220 սաների և 38 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում	25,500,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
			18.02.2011 Մ-045-Ա	սոցիալական	Շիրակ	Գյումրու թիվ 10 նախակրթարանի 80 սաների և 24 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում	12,500,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
			18.02.2011 Մ-046-Ա	սոցիալական	Շիրակ	Գյումրու թիվ 23 նախակրթարանի 150 սաների և 25 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում	18,500,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
			18.02.2011 Մ-047-Ա	սոցիալական	Երևան	Նոր Նորքի վարչական շրջանի թիվ 99 ՆՈՒՀ ՀՈԱԿԻ-ի 140 սաների և 30 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում	18,500,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
			18.02.2011 Մ-048-Ա	սոցիալական	Երևան	Նոր Նորքի վարչական շրջանի թիվ 101 ՆՈՒՀ ՀՈԱԿԻ-ի 200 սաների և 32 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում՝ սննդի, հագուստի, խաղալիքների, հիգիենիկ և այլ պարագաների տրամադրում	10,000,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
			18.02.2011 Մ-049-Ա	սոցիալական	Երևան	Նոր Նորքի վարչական շրջանի թիվ 104 ՆՈՒՀ ՀՈԱԿԻ-ի 230 սաների և 34 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում՝ սննդի, հագուստի, խաղալիքների, հիգիենիկ և այլ պարագաների տրամադրում	21,000,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
			18.02.2011 Մ-050-Ա	սոցիալական	Երևան	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 156 ՆՈՒՀ ՀՈԱԿԻ-ի 146 սաների և 20 աշխատակիցների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում՝ սննդի, հագուստի, խաղալիքների, հիգիենիկ և այլ պարագաների տրամադրում	41,000,000 դրամ	01.01.2011- 31.12.2015	շարունակական
